ձևով՝ շեշտադրելով իր անմիջական ներկայությունն ու մասնակցությունը. «Եւ սուրբ գլուխն Անդրէի առաքելոյն կայ այժմ ի նոյն վանքն, որ բազում անգամ ուխտ արարեալ և համբուրեալ եմք զնա» (էջ 168), կամ՝ «և զսպի և զտեղի վիրացն եցույց մեզ ի ժամանակս յայս, որ և զպատմութիւն զայս նա պատմեաց զմեզ, որոց ինքն ականատես էր» (էջ 170) և այլն:

Հիմնավորում-պատճառաբանում հնարքի պարագային ևս առկա են որոշակի տեքստային կաղապարներ: Հիմնական և առավել կիրառված կաղապարը հետևյալն է՝ ***«պատճառ այս էր»***: Կաղապարին հաջորդում է բուն հիմնավորումը, որը կարող է դրսևորվել ինչպես մեկ նախադասությամբ, այնպես էլ ամբողջ պարբերությամբ, երբեմն նաև՝ էջերով: Ուշարժանն այն է, որ բուն հիմնավորում-պատճառաբանումը երբեմն ստանում է որևէ ժանրային, հիմնականում՝ զրույցի նկարագիր: Այդպիսին է, օրինակ, «Պատմութիւն և պատճառ աւերման աշխարհին Վրաց և մահուան Լաւասափ թագաւորին նոցա, որ եղև ձեռամբ առաջին Շահաբասին» վերնագրով ԺԱ գլուխը:

Դավիթ և Մելքիսեթ կաթողիկոսների «պատճառ գնալոյ... առ շահն...» (էջ 62)՝ «Յաղագս գալստեան Շահաբասայ թագաւորին Պարսից յաշխարհս Հայոց և ունելոյ զամենայն, և վարդապետին Սրապիոնի դառնալոյ անդրէն ի տեղի իւր» վերնագրով Գ գլխում ներկայացվում է մի ամբողջ ընդարձակ պարբերությամբ: Ջուղահայերի՝ Պարսկաստանում մնալն ու այլևս հայրենիք չվերադառնալը «Յաղագս քշելոյ զամենափարթամ գիւղաքաղաքն Ջուղայու յերկիրն Պարսից» վերնագրով Ե գլխում Դավրիժեցին հիմնավորում է վեց պատճառաբանությամբ (էջ 93-94): Մեկ այլ իրադարձություն հիմնավորվում է երկու պատճառաբանությամբ. «...խնդրէր սպանանել զնա յաղագս երկուց պատճառացս: Առաջինն՝ վասն նախկի խայտառականաց քեռն իւրոյ, և երկրորդ՝ վասն վերջին անարգանացն նմին» (էջ 122): Հիմնավորում-պատճառաբանություններում Դավրիժեցին ներկայանում է իր աշխարհայացքի